Քիւրդքենդ, Զուրաւա եւ Ղարադերէ բնակավայրերի միջեւ: Աղ-չայ գետը, նրա կարծիքով, հէնց հին Տղմուտ գետն է[10]:

6. Դոկտոր Յարութիւն Աստուրեանը որպէս Աւարայրի ճակատամարտի վայր է նշում Մակու քաղաքից 6-7 կմ հիւսիս ընկած շրջանը, իսկ Մակու-չայի ձախ վտակ Սարիսու գետն էլ՝ Տղմուտը[11]:

7. Ակադ Ս. Տ. Երեմեանը թէեւ համաձայն է Մանանդեանի հետ՝ դէպի ճակատամարտի վայրը Պարսից զօրքի շարժման երթուղու եւ Աւարայրի տեղադրութեան վերաբերեալ[12], սակայն ճակատամարտի տեղը ցոյց է տալիս Ղարաքիլիսա գիւղի շրջանում, այսինքն՝ Մակու քաղաքից 22-23 կմ հարաւ[13]: Այդ շրջանը Ս. Տ. Երեմեանից առաջ Աւարայրի ճակատամարտի վայր էր համարում Կ. Բասմաջեանը[14]: Ղարաքիլիսայի շրջանը Աւարայրի ճակատամարտի վայր է համարւում նաեւ «Մեծ սովետական հանրագիտարանում» եւ «Սովետական պատմական հանրագիտարանում»[15]: Ըստ այդմ, այդ վայրն ընդունւում է ինչ-որ իմաստով պաշտօնապէս:

8. Վերջապէս յաւելենք, որ Երեւանի Պատմութեան պետական թանգարանում, հին Հայաստանի ռէլիեֆային քարտէզում Աւարայրի ճակատամարտի վայրը նշուած է Մակու-չայ գետի ստորին հոսանքում, Յուլագելդի բնակավայրից արեւելք»[16]:

---

[10] Հարությունյան 1947, 130-133: Բայց չէ՞ որ այս Աղ-չայ գետը հոսում է ոչ թէ **Արտազ**, այլ **Թոռնաւան** եւ **Ճուարշ-ռոտ** գաւառների տարածքով:

[11] Աստուրեան 1947, 137: Պէտք է նկատի ունենալ, որ այս Սարի-սու – Արուն-գետի հովտի մեծ մասը Այրարատի **Կոգովիտ** գաւառի տարածքում էր:

[12] Հեղինակը նկատի ունի այն, որ Ս. Երեմեանը յղում է Յ. Մանանդեանի «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները...» երկը եւ նրա էջ 155-ի քարտէզը:

[13] Տե՛ս Еремян 1951, 58, прим. 1. Հմմ. նաեւ էջ 49-ի «Армения и соседние страны в 450-451 гг.» քարտէզը: Ռուսական 5- եւ 10-վերստանոց քարտէզներում Ս. Թադէի վանքի գիւղը՝ **Ղարաքիլիսան**, այլ անուն ունի՝ **Քիլիսա-քենդ**:

[14] Բասմաջեան 1914-1927, 247:

[15] Տե՛ս БСЭ, 1949, т. I, 61 (հմմ. նոյնը նաեւ 3-րդ հրատարակութեան մէջ՝ 1970, 48); СИЭ, 1970, т. I, 61 (բնագիրը գրեթէ նոյնն է БСЭ-ի հետ՝ «**Аварайрская битва 451** – произошла 26 мая на Аварайрском поле (южнее совр. Маку)...», սակայն տրւում է նաեւ գրականութեան մէկ յղում՝ «Еремян С. Т., Народно-освободительная война армян..., ВДИ, 1951, № 4»).

[16] Агабекян 1967, 91-92. Այս վերջին վայրին շատ մօտ է տեղադրուած «Աւարայրի դաշտը» նաեւ Բաբկէն Յարութիւնեանի քարտէզներում (Մակուի եւ Յուլագելդիի միջեւ. արդեօ՞ք հիմք ընդունելով մօտակայ «Խանդ**աւար**» գիւղանուան վերջնամասի կամ էլ «**Արաբ**լար» դաշտանուան սկզբնամասի զուգորդութիւնը): Տե՛ս Հարությունյան 2004, 49; Հարությունյան 2008, 34: